

ՎԱԶԳԵՆ ՕՎՅԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ՍԻՆՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Անվանի գրող, երգիծաբան և բանաստեղծ Վ. Օվյանը, ով ապրել և ստեղծագործել է Արցախում, այն տարիներին, երբ հայկական այդ երկրամասը գտնվում էր Ադրբեջանի լծի տակ, աննահանջ հայրենասեր և խիզախ արդարախոս էր: Ավա՛ղ, նա չտեսավ ազատ ու անկախ Արցախը:

Վ. Օվյանի հայրենասիրական քնարերգության ընտիր մտղշները զետեղված են հիմնականում «Լեռների լեզենդը» ժողովածուի «Մենախոսություններ» շարքում, որը բացվում է «Փառաբանումն» անկրկնելի բանաստեղծությամբ: Դասական շնչով կերտած այս ոգեշունչ քերթվածը հարուստ է բանաստեղծական ուշագրավ գյուտերով: Դա հիանալի ինքնաբերականություն է նաև. «Ես քո հողմաթեք թթենու բույնն եմ, ապրեն-չապրենիդ տոկունությունն եմ, Խաչված Հիսուսդ՝ աշխարհին ի ցույց, ես՝ վանքում փակված քո խեղճ արեղան, որ հառաչում է իր անհույս սիրուց»:

Հնձաններիդ մեջ քլթքլթացող լուռ-
Ես քո խաղողի քաղցրությունն եմ,
Եվ քո աղեղը, քո վահանը կուռ,
Եվ քո ժայռերի կարծրությունն եմ:

Բանաստեղծական հայտնություն է և խոր ենթատեքստ ունի «Ցրտից չխամրող ծաղկունքիդ գույնն եմ, արևի փոքրիկ շողից չխաբվող» տողը:

Հաջորդ, ավելի հետաքրքրական ու զարմանահրաշ բանաստեղծական գյուտը. «Ես քո բողբոջի զսպվածությունն եմ» տողն է, ապա՝ քերթվածի վերջնամասում բանաստեղծական շիկացման հասնող՝ քնարական հերոսի խոսքը.

Ես երազներն եմ քո հազարածև,
Ես քո իմաստուն համբերությունն եմ,
Մելիք, խան ու բեկ կգան ու կանցնեն,
Ես, սրբազան հող, քո զորությունն եմ,
Ես՝ ապացուցված քո վեհությունը
Եվ քո ոգին ու երզը քաղցրաբառ,
Դու իմ հայրենի օջախն ու տունը,
Ճիչս՝ Դարաբաղ, խիղճս՝ Դարաբաղ:

Գրքի «Մենախոսություն» շարքն առանձնանում է մեկը մյուսին գերազանցող լիարյուն բանաստեղծություններով, որոնք են «Պողոս վարդապետի բողբոջը», «Պողոս վարդապետի տրտունջը», «Պողոս վարդապետի աղոթքը», «Պողոս

վարդապետի ցասունը», «Պողոս վարդապետի զայրույթը», «Պողոս վարդապետի խրատը», «Պողոս վարդապետի կտակը»: Այս շարքում տեղ են գտել նաև «Վասն հուդայության», «Մելիք Եսայու պատասխանը պարսից շահին» և «Մելիք Շահնազարի մենախոսությունը» գործերը:

«Պողոս վարդապետի բողոքը» Տիրոջն ուղղված պաղատանք է պարզապես: «Տո՛ւր արիություն ու կամք մի համառ՝ ամեն զուռնայի ձենից չպարեն», - Տիրոջն է դիմում Պողոս վարդապետը, որը հեղինակի խոսափողն է: «Տո՛ւր այնպիսի ձայն, որ այս աշխարհում բան հասկացնեն խլականջներին», - շարունակում է իր խնդրանքը Տիրոջը.

Եվ, Տեր իմ, տուր ինձ համարձակություն,
 Որ իրերն իրենց անունով կոչեն:
 Ձգողության ուժ տո՛ւր ինձ մագմիսի,
 Որ ոսկուց ժանգոտ երկաթը զատեն,
 Եվ կարողություն, որ իմ ոսոխին
 Ոսոխի նման միմչև վերջ ատեն:
 Ա՛խ, Տեր իմ, տուր ինձ նաև չարություն,
 Որ բարությանս գինը իմանամ,
 Փխրունությանս կարծրություն տուր,
 Որ ամեն ցավ ու վերքի դիմանամ:

«Պողոս վարդապետի տրտունջ»-ում մարդկային հարաբերությունների կեղծիքն է մերկացվում («Մեկը մյուսի ցավը տամե՛լով, իրար խաբում ենք»): «Պողոս վարդապետի աղոթքը» բանաստեղծության մեջ հնչում է սոցիալական բողոքի ձայնը: Փաստորեն, աղոթքը հնչում է որպես բողոք՝ ուղղված Տիրոջը, թե՛ ինչո՞ւ «իր և մելիքի միջև սահման է գծված, ինչո՞ւ դատողը սոված է մնում, իսկ չդատողն ուտում, լրբանում է, ինչո՞ւ նույն աչքով չի նայում Տերը նրան ու մելիքին, ինչո՞ւ տերը «քացի տա», և անասուն կոչվի ծառան, ինչո՞ւ ունեցողներին տալիս է այնքան, որքան ուզում են, իսկ չունեցողներին անխղճորեն «խուզում է», ինչո՞ւ «պոչ շարժող շողոքորթներին թողնում է անպատիժ»: Բողոքը գնալով ահագնանում և բանաստեղծության վերջում վերածված է չլսված հանդգնություն: Պողոս վարդապետն առաջարկում է Տիրոջը փոխել տեղերը.

Փոխենք մեր դերը,
 Թող ես սուրբ կոչվեմ,
 Դու՝ Պըլը-Պուղի:

Սակայն մինչ այդ, տեղի է տալիս վարդապետը՝ ներողամտություն հայցելով Տեր Աստծուց.

Ներիր, ես ծուռ եմ, խելամ ու խենթ եմ, լեզու ունեմ սուր,
 Ձի այս աշխարհում ճշմարտությունը խենթերն են ասում:

Թե որ ուժ ունես, տուր ինձ զորություն՝ չվիճեմ քեզ հետ,
Բերանս փակիր, համր քար դառնամ, լեզուս ինձ պահեմ:

Բայց և չվիճել չի կարողանում ըմբոստ վարդապետը, որը, ինչպես նշել ենք արդեն, բանաստեղծի խոսափողն է:

Վեճն ու բողոքը շարունակվում են հաջորդ՝ «Պողոս վարդապետի ցասումը» բանաստեղծության մեջ... Այստեղ նա Տիրոջը թողնում և ծաղր ու ծանակի է ենթարկում այն կեղծավոր սուրբ հայրերին».

Որոնք Աստծո փեշը բռնել
Ու Տեր Աստծո անունով են
Մեր հավատն ու խիղճը խժռել:

Ծաղրի ու անարգանքի է ենթարկում նաև «հուղաներին այն կեղծավոր»,

Որոնք իրենց անմարդկային կշեռքով են

Մեր մարդկային ըմբոստ ոգու ճիչը կշռում...

Ծաղրում ու ծանակում է Տիրոջ դաժան կրնկի տակ ճգմվող ստրկահաճ հպատակին, որը, կրկին սողալով, իրեն պատժողի աջն է համբուրում, և «մարդուկներին այն երկդիմի», որոնք դավել են բազմիցս հավատն իրենց, բայց և այսօր հանդգնում են Քրիստոսի աջն համբուրել:

Նմաններին նա ծաղկում է անխնա, ծիծաղում նրանց վրա, ապա խոստովանում դառնացած.

Ծիծաղել են ու ծիծաղիս համար հաճախ լաց են եղել:

Այսպես, «լաց ու ծիծաղ իրար խառնած» անցել է իր դժվարին ճանապարհը՝ հարկադրված գլխին դնելով «միմոսի գդակ».

Իսկ ես ստիպված, գլխիս դնում եմ միմոսի գդակ,

ճշմարիտ խոսքը ներկայացնում որպես սոսկ կատակ:

Ես ծիծաղում եմ արցունքիս միջից, ձեր ծուռը հարթում,

Ծիծաղս տեսնում, սակայն արցունքս դուք չեք նկատում...

Ավելին՝ «ամեն համբակ քար է նետում վրան»: Ցնցող է բանաստեղծության ավարտը. թեկուզ «ըմբոստ ոգին հանեն» իրենից, թեկուզ գլխատեն, միայն՝ Խնդրում եմ, այնպես կտրեցեք իմ այս վիզը խեղճ,

Որ Ղարաբաղը չսպանեք իմ մեջ:

Մարդկայինի ու մարդկայնության կոչ է «Պողոս վարդապետի խրատը» բանաստեղծությունը, ուր խիղճը մեջտեղ դնելու և իրար չխաբելու» պահանջն արտահայտված է ժողովրդական լեզվամտածողությանը բնորոշ ասացողական շնչով.

Մեր լեռների և ժայռերի նման կուռ ու վես մնանք,

Քանի ապրում ենք, մեր հանդում բուրող ուրցի պես մնանք:

Եվ Պըլը-Պուղին ասաց՝ հազար փառք մեր հող ու ջրին,

Սեր թռռների ու ծոռների աչքուն պարզերես մնանք...

«Պողոս վարդապետի կտակ»-ով է ավարտվում վարդապետի խոսքն՝ ուղղված Տիրոջը», աշխարհին ու մարդկանց: «Մարմարե դամբան» նա չի կամե-
նում և ոչ էլ «իշխանավորի փառահեղ թաղում».

Տրեխներով են անցել իմ ճամփան,

Տրեխներով ինձ դրեք դագաղում...

Աշուղ Սայաթ-Նովայի պես արցախյան զվարճախոսը «ռամիկ է, իշխան դռ-
նալ չի ուզում»: Դեռ մինչ կտակը, նա ներկայացնում է իր ապրած կյանքի ուղին և
մարդկային իր նկարագիրն ու էությունը.

Ոսկու, արծաթի ես այք չեմ տնկել,

Գլուխ չեմ գովել, ստից չեմ ճառել,

Կյանքս ապրել եմ անդավ ու անքեն,

Ո՛չ կաշառել եմ, ո՛չ էլ կաշառվել...

Վ. Օվյանի բանաստեղծական վարպետությունն այստեղ ևս ակնհայտ է: Նա
կարողացել է համոզիչ, պարզ, անպաճույճ ու բնական կառուցել ժողովրդական
արդար սրախոսի խոսքը.

Չեմ խաբել երբեք ո՛չ ինձ, ո՛չ էլ ձեզ,

Աղունս առանց հերթի չեմ աղել,

Բայց պատահել է, եղել է այնպես,

Որ գետի վրա այլուր եմ մաղել:

Երբ քնարական հերոսը ժողովրդի մարդն է, ժողովրդական զվարճախոսը,
բանաստեղծական խոսքը պիտի հնչեր հենց այսպես՝ վճիտ, հստակ, հատու և
բնական, ճիշտ այնպես, ինչպես անգերազանցելի վարպետությամբ դա արել է
ժողովրդական բառ ու բանի սիրահար ու վարպետ Օվյանը: Ահա Պըլը-Պուղու
վերջին ցանկությունը, որն անմնաճ գեղեցիկ քերթվածի է վերածել բանաստեղծը.

Եվ պաղատում եմ, քար դրեք վրաս,

Մի հասարակ քար, մամուռը կողին,

Այդ քարի վրա գրեցեք միայն.

«Այստեղ հանգչում է մեր Պըլը-Պուղին»:

«Շնորհիվ Սերո Խանգաղյանի և Վազգեն Օվյանի՝ իր երկրորդ ծնունդն է
վերագտել Արցախի եզրպոսը՝ «Պըլը-Պուղին»,– նկատել է Արցախի պետական
համալսարանի պրոֆեսոր Ջեղինե Գրիգորյանը: – Հիրավի, Օվյանն անհուն ջեր-
մությամբ է կերտել արցախական ժողովրդի պատմությունն ու լավագույն արժա-
նիքները՝ պարզասրտությունն ու ազնվությունը, ասպետությունն ու ըմբոստու-
թյունը, անխորտակ հավատն ու մարդասիրությունը մարմնավորող զվարճաբանի
հմայիչ կերպարը, որի դաստիարակչական դերը սերունդների հոգեկերտվածքում

անգնահատելի է»:

Վազգեն Օվյանի «Լեռների լեզունը» գրքի «Մենախոսություններ» շարքում ընդգրկված են նաև «Մելիք Եսայու պատասխանը պարսից շահին», «Մելիք Շահնազարի մենախոսությունը» և «Վասն հուղայության» մեծարժեք բանաստեղծությունները:

Առաջին բանաստեղծության մեջ հայ ժողովրդի խաղաղասիրական ոգին է ճախրում, և արցախցու ըմբոստ հպարտությունը, նախապապերից ավանդված, դարերով սրբագործված բարոյական բարձր արժեքների լույսն են ճառագում նաև՝

Ձերը լինեն ու ձեզ մնան պարտեզները ոսկեբեռեզ,

Հայրենաշեն մեր լեռների մի չոր քարն էլ հերիք է մեզ:

Ձերը լինեն ու ձեզ մնան պալատները ձեր փառավոր,

Մենք մեր անշուք խրճիթի մեջ և՛ իշխան ենք, և՛ թագավոր:

Ձերը լինեն ու ձեզ մնան հարեմները ձեր հեշտագին,

Մեր օրենքով սերը մեկն է, մենք տրված ենք միայն մեկին:

Սակայն, զգուշացնում է Մելիք Եսային պարսից շահին. «այնպես ապրեցեք դուք այս աշխարհում, որ մեր սանձակոծ նժույգները ձեր դաշտերում չխրխնջան, ձեր աշխարհի սև հողմերը չզալարվեն մեր արտերում, ձեր կռվատենչ զինվորները մեր լեռներում չհառաչեն, և մեր լեռների կայծակները ձեր աշխարհում չչառաչեն»:

Միանգամայն ուշագրավ է «Մելիք Շահնազարի մենախոսությունը» բանաստեղծությունը: Նման բացասական, նզովյալ տիպը ուրիշ էլ ինչ կարող է մենախոսել, քան՝ «վատ երազ տեսա, իբր մեռնել եմ ու թաղող չկա»:

Հիրավի, բանաստեղծական գլուխգործոց է շարքի «Վասն հուղայության» բանաստեղծությունը, որը գրվել է Ադրբեջանի բռնապետության ժամանակ:

Ձևի և բովանդակության առումով որքան էլ հաջողված լինի նման գրողի չափածո կամ արձակ գրական ցանկացած ժանրի ստեղծագործությունը, միևնույն է՝ բավարար չէ ընթերցողին հավատ ներշնչելու համար:

Այս առումով, Արցախի գրական ընտանիքում Վազգեն Օվյանն այն քչերից է, որի տողին հավատացել ու սպասել է ընթերցողը: Արդարադատ արցախցին թացն ու չորը ջուկել գիտե և որսում է տողի ամենաաննշան կեղծիքն անգամ: Նա հավատում է Օվյանի տողի շիտակությանը և անհամբերությամբ սպասում նրա հատկապես երգիծական ժանրի գործերին, որոնք, արդարև, մեծ պահանջարկ ունեին: Վազգեն Օվյանն իր հորդացող տաղանդով խարազանում ու մերժում է իր ապրած ժամանակներում (դժբախտաբար՝ նաև այսօր) առկա անտարբերությունը, որի լուռ համաձայնությամբ արմատակալում են բոլոր տեսակի հանցագործություններն ու արատները՝ պատեհապաշտությունը, մորթապաշտությունը և ստրկամտությունը, որը մեր տունը մտած և իրենց տանտիրոջ պես պահող «շեյխի թռռ-

ներին» հնարավորություն է ընծեռում տեր զգալու մեր լեռնաշխարհում:

Վազգեն Օվյանի՝ արցախյան թեմայով գրված ստեղծագործություններին բնորոշ է խոր դրամատիզմը: Իր մարդկային և բանաստեղծական խառնվածքին հարիր՝ Վ. Օվյանը չի թաքնվում տողատակերում: Նրա խոսքը հնչում է համարձակ ու պարզ, առանց ավելորդ կաշկանդվածության ու մթամած ենթատեքստերի:

Այս առումով կարելի է զուգահեռ անցկացնել Վ. Օվյանի և հայ քերթության մեջ իր շիտակ ու խիզախ խոսքով մրցակից չունեցող Յովհ. Շիրազի մրջև: Այն, որ Յովհ. Շիրազ մեծ քաղաքացին և հզոր տաղանդի տեր բանաստեղծը բացարձակ հեղինակություն է Վ. Օվյանի համար, վկայում է 1984 թ. մարտի 14-ին մեծ բանաստեղծի վախճանվելու օրը գրած «Ասք անմահության» հուզաշաղախ բանաստեղծությունը, որը գրական հուշարձան է մեր ազգային Մեծ Ըղծասացի անմահ հիշատակին: Վ. Օվյանն ըստ արժանավույն է գնահատում հայ պոեզիայի արքային՝ շեշտելով նրա աննախադեպ ժողովրդայնությունն ու բնատուր, հորդաբուխ հանճարը: «Ասքը» Յովհ. Շիրազի մարդկային ու գրական կերպարն ամբողջացնող ստեղծագործություն է, որը պետք է տեղ գտնի մեր դասագրքերում: Հարկ է նկատել, որ այս անկրկնելի քերթվածը ոչ միայն Յովհ. Շիրազ մարդուն և բանաստեղծին է բնութագրում, այլև իրեն՝ Վազգեն Օվյան մարդուն և բանաստեղծին: Ինչպիսի՞ն է Վ. Օվյանի Յովհ. Շիրազը.

Շիրազը Մասիս սարի բողոքն է
Ու հառաչանքը մեր Վանա ծովի,
Անլուր տանջանքը գերված Տարոնի...

«Ձենով Օհանի տազնապի կանչն է» Յովհ. Շիրազը, «չարից շղթայված Արտավազդ արքան», Շիրազը «Սասնա հույսի Միերն է», «որբացած մանկանց արցունքի լեռը», նա մեր ժողովրդի «ծով համբերության լցված բաժակն է», միանգամայն դիպուկ նկատում է Վ. Օվյանը, «վշտից խելացնոր մեր Եփրատ գետը»: Յովհ. Շիրազը՝

Մեր ոգու ցասումն ու աղաղակն է.
Ընդդեմ Աստծո՝ կույր ու խլականջ,
Շիրազը հայոց դարավոր հարցն է,
Եվ հարցականը չլուծված հարցի...

Վ. Օվյանը մարդկային իր անբասիր նկարագրին հոգեհարազատ մեծ ժամանակակցին՝ Յովհ. Շիրազին և նրա ստեղծագործությունն ընկալում ու գնահատում է այնպես, ինչպես ողջ հայ ժողովուրդը՝ Սփյուռքից մինչև Արցախ՝ համծին ազգանվեր քերթողի տեսնելով իր նվիրական բաղձանքների խիզախ արտահայտչին:

Շիրազն այն հզոր սիրո կրակն է,
Որ սրտերի մեջ երբեք չի մարում,

Եւ «մեր դպրության անմահ հանճարն է» ու «մեր գերդաստանի անեղծ մանուկը», – փաստում է Վ. Օվյանն իր «Ասք անմահության» երկում: Այստեղ են ասել. թե՛ «նմանը զնանին»... Վ. Օվյանն էլ իր մարդկային նկարագրով ու շաղախով «անեղծ մանուկ էր, ինչպէս վկայում են իր բոլոր ժամանակակիցներն ու գրական ընկերները: Ինքն էլ Հայաստանից հանիրավի խլկած պատմական Հայաստանի 10-րդ նահանգի՝ Արցախի Շիրազն է, որի երզը երբեք չկարողացան կաշառել...

Ոչ ոք չի կարող երգս կաշառել,

Դեպի Մասիս է երթս աննահանջ... (Հովհ. Շիրազ):

– Հովհ. Շիրազը մեր ավանդական երգի թափն է՝ Նարեկից մինչև Եղիշե Զաբենց, – գրում է Վ. Օվյանը, «մեր կարոտի լեռն ու խիղճն է անբիծ».

Մեր ցավից ժայթքած այն հրաբուխն է,

Որ շպրտում է իր խառնարանից

Հրի փոխարեն

Լալ ու գոհարներ:

Շիրազը հայոց վշտի արձանն է,

Շիրազը չքնաղ մեր Երևանն է,

Արցախն ու Վանը, Եփրատն ու Անին...

Ասքի վերջնահատվածում Օվյանը պատգամում է.

Քանի ապրում ենք այս երկնքի տակ –

Շիրազով պիտի մեր սիրտը բանանք,

Շիրազով պիտի չափենք մեր թափը,

Հայոց Շիրազով պիտի իմանանք

Մեր ոգու ուժն ու մեր սիրո չափը...

Ծշմարիտ բանաստեղծների մոտ պատահական ոչինչ չի ստեղծվում. նրանց յուրաքանչյուր տողը նրանց իսկ հոգու անխարդախ հայելին է: Արցախի ոչ մի բանաստեղծ Հովհ. Շիրազի մասին հիշատակի երգ կամ ձոներգ չի գրել: Հենց Վազգեն Օվյանը պետք է գրեր Հովհ. Շիրազի մասին. բնական ու տրամաբանական է դա. բանաստեղծական անկեղծ այրումը անկեղծ ու անեղծ հոգիներին է համակում միայն:

Հախուռն, անձնազոհ, սահմաններ չճանաչող հայրենասիրությունը, շնորհիվ որի հազարավոր ընթերցողների սրտեր է նվաճել Հովհ. Շիրազը, բնութագրական է նաև Վ. Օվյանի խառնվածքին. «Ոչ մեկի առաջ գլուխ չծռելու» կենսակերպը և «աննահանջ երթը դեպի Մասիս», դեպի բռնագրավված հայրենիք եղավ Հովհ. Շիրազի ողջ ստեղծագործական կյանքի գերագույն նպատակը, նրա ամբողջ կյանքը խորհրդային բռնապետության տարիներին, երբ ազգային մեծ բանաստեղծին չէին թույլատրում դուրս գալ Հայաստանի սահմաններից, թեև նրա հրեղեն ու

ազատատենչ երգը սավառնուն էր հայկական Սփյուռքուն և խորհրդային Սփյուռք-գաղութացված Արցախուն, մաքառուն և ստեղծագործական խիզախուն եղավ, իսկական ճակատամարտ՝ խորհրդային դիմագրկության և համահարթման տարիներին: Բերենք ասվածն հաստատող ընդամենը մի կտոր.

Ավարայրի դաշտն է հրկեզ
Գրասեղանն իմ լռին,
Դաշտ եմ խուժում Վարդանի պես՝
Թուր կեծակին իմ ձեռին,
Դուրս չեմ գալու, ես կկիզվեմ,
Կզոհվեմ այդ սուրբ դաշտուն,
Որ չդիպչեն հայոց լեզվին
Ժամանակներն անկշտուն:

«Անկշտուն ժամանակներուն» անհավասար ճակատամարտ եղավ Յովի. Շիրազի կյանքը՝ ճակատամարտ հայոց արդար դատի, աշխարհով մեկ սփռված տարագիր հայության ճակատագրի ու արդար պահանջի, օտար լեզուների ճնշման տակ հետ նահանջող հայոց լեզվի համար:

Հայրենասիրական պաթոսը, վարակիչ անմիջականությունը, ընդդեմ բացահայտ ու ծպտյալ թշնամու՝ աննահանջ խոյանքը, արդարացի ցասման թափը և անհանդուրժողականությունը, ատելությունը անարդարի ու կեղծիքի նկատմամբ, որով համակված է Վազգեն Օվյանի պոեզիան, և նրա բանաստեղծական խառնվածքի հոգեհարազատությունը Յովի. Շիրազի հետ վկայուն են Յովի. Շիրազի և Վ. Օվյանի «ազգակցական-արյունակցական» կապի մասին: Գրականագետ Աշոտ Տեր-Մինասյանը միանգամայն ճիշտ է նկատել այն իրողությունը, որ «ինչպես Յովի. Շիրազի շատ անտիպ գործեր (այդ թվում՝ «Ողբ Ղարաբաղի» բանաստեղծությունը) բերնբերան տարածվում էին Հայաստանով մեկ, այնպես էլ Վ. Օվյանի հայրենաշունչ երգերն էին թևածուն Արցախ աշխարհի վրա»¹:

Վ. Օվյանի հայրենասիրական քնարերգության մեջ նույնպես տրոփում է ցասունով լցված, լռել չկարեցող, արդարություն պահանջող բանաստեղծի անհանգիստ սիրտը: Նրա ազնիվ ու ըմբոստ հոգին կեղեքում էր կոմունիստական շռուների մեջ կործանվող հայրենի եզերքի ցավը: Այդուհանդերձ, նա չի հուսալքվել, չի ընկճվել երբեք: Նրա հայրենասիրական երգերը շնչուն են թևավորող հպարտությամբ և ոչ երբեք սնապարծությամբ...

Նրա չափածո խոսքի քաղաքացիական ոգին, առանձնապես հայրենասիրական և մարդու ու մարդկայինի խնդիրն արծարծող բանաստեղծություններուն շիկանում է, սակայն երբեք չի վերածվում հրապարակախոսության կամ հռետորական կոչի:

¹ «Լեռների լեզունը», էջ 579:

Վ. Օվյանի երգած Ղարաբաղը միանգամայն տարբերվում է իր գրչակիցների պատկերած Ղարաբաղից: Արցախին նվիրված՝ Վ. Օվյանի երգերում Ղարաբաղը սրբազան տուն է, հող հայրենի և ոգի, որը, սակայն, աննկատ հանգչում է օր-օրի, որի ինքնությանն սպառնում են «շեյխի թռռները» և «շիքաստները» խեղդել են փորձում նրա զուլալ երգերը... Այնինչ նրա սերնդակից գրողների ստեղծագործություններում Ղարաբաղը Աղղան-Ստեփանակերտ երկաթուղով «բարգավաճող», Ադրբեջանի «հոգատար» ձեռքի տակ «ծաղկող» Ղարաբաղն է...

Վազգեն Օվյանի Ղարաբաղապատումը կամ Արցախնամեն լի է ցավով ու ցասումով, տագնապով ու զգաստության կոչող այրող ճիչով: Սթափության զանգ է նրա երգը: Բողոքն ու ցասումը, արդար ընդվզումը, մեր պատմությունը խեղաթյուրող թերուս «ակադեմիկոսի», «մեր տանն իրեն տանտեր» համարող քոչվորի որդու և սրանց հաճոյացող, Ջեյնաբ Խանլարովային և Միրզա Իբրահիմովին երգեր ծնող ստրկահաճ գրչակների ազգամոռ վարքի դեմ, ժայթքում են Օվյանի հայրենասիրական երգերից ու «Սատիրիկոն» շարքից:

Վազգեն Օվյանի քնարական հերոսի ազգային ու մարդկային նկարագրում ամենաբնորոշը ազգային հպարտությունն ու արժանապատվությունն է, ճշմարտության համար անվախ մարտնչելու, ստրկությունը չհանդուրժելու բնածին, հերոսական նախնիներից ժառանգած գիծը, շիտակությունն ու արդարամտությունը: Բանաստեղծի պոեզիայի նյութը կյանքն է, միջավայրը՝ խորհրդային Արցախը իր՝ արտաքուստ բոլորին հայտնի նվաճումներով, շատերի համար անհայտ, թաքնված ողբերգություններով ու կորուստներով: Ծայրաստիճան անկեղծությունն ու համարձակությունը դառնում են բանաստեղծական սխարանք, բանաստեղծությունները հնչում են որպես զգաստության կոչող ահազանգ: Հոգու ցավը վերաճում է ցասման, շիկանում է զգացմունքը, և ցասումից ու ցավից ծնվում է ճշմարիտ երգը: Կորստյան ցավը հանգիստ չի տալիս Վ. Օվյանի քնարական հերոսին, «շիքաստները» ոչ թե կլանում են նրան, ինչպես իր սերնդակից գրողներից ոմանց, (Կոմիտասի երգից զատված, քեզ չեն թողնի իշխան մնաս, քեզ կուլ կտան մուղանները, թառղ կառնեն, վայ Ղարաբաղ. դեռևս Հովի. Շիրազն է հնչեցրել «Ողբ Ղարաբաղի» քերթվածքում), այլ կրկնապատկում են բանաստեղծի տագնապը:

«Լեռների լեգենդը» ժողովածուի վերնագիրը խոսում է բավականին:

Տագնապի զանգ հնչեցնելուց բացի, Վ. Օվյանն այս գրքում պատմում է հերոսական Արցախ լեռնաշխարհի լեգենդը՝ դարերի խորքից եկող, մեր օրերում վերստին հարստացող նոր պատումներով:

Վ. Օվյանն իր ճշմարիտ գրականությունը հակադրում է չափածո դատարկախոսություններին: Ինչպես փաստում է Վազգեն Օվյանի գրական ուսուցիչներից մեկը՝ Համո Սահյանը, «Պոեզիայի դերը մնում է մարդուն ազնվացնելը, գեղեց-

կացնելը»¹.

Վ. Օվյանը միշտ ավանդապահ է եղել պոեզիայում և երբեք իրեն թույլ չի տվել զբաղվել գրական վարժանքներով: Նրա բանաստեղծական խոսքը հնչում է դասական պարզությամբ և ունի հարուստ բովանդակություն՝ միանգամայն ընթեռնելի տարբեր մակարդակի ընթերցողների համար: Օվյանն անընդհատ վեճ ու կռվի մեջ է անարդարության և անարդար մարդու հետ, հոգին ի սեր շահի խաթարած, մարդու և գրողի նկարագիրը կորցրած, բանաստեղծի վսեմ կոչումն արատավորող և անընդունելի կենսակերպով նսեմացնող մարդուկի ու գրչակի դեմ: («Գրական խուժանը») Վ. Օվյանի կռիվը նաև անտարբեր ու մորթապաշտ մարդու դեմ է, որն «հավկուրությամբ գլուխ է պահում»: Այս առումով նրա քնարական հերոսին հոգեհարազատ է Զ. Սահյանի «անտարբերության, անշարժության հետ մինչև գերեզման գժտված մարդուն» որոնող քնարական հերոսը²:

«Լեռների լեգենդը» գրքի «Այլ բանաստեղծություններ» շարքի ծավալուն բանաստեղծություններից պատմական բովանդակությամբ առանձնանում է «Սմբատ և Բաբեկ»-ը, որը գեղարվեստական մնայուն կորոլ է:

Վ. Օվյանի սուր գրիչն անխնա ձաղկում է մեր տունը մտած «անտուն, անօրեն քոչվորի որդուն»՝ հայ ժողովրդի դարավոր ոսոխին, որի բնածին բարքը բարբարոսությունն ու թալանելն է և «ուրիշներից խլած հողում ուրիշների պատմությունը գողանալը»:

Բանաստեղծության օրախնդիր թեմա է շոշափում: Ժամանակին ադրբեջանական և ռուսական մամուլում ադրբեջանցի բանաստեղծ Ռասուլ Ռզան բանաստեղծություն (պոեմ) էր տպագրել, որտեղ հայ Սմբատ իշխանին մեղադրում էր ադրբեջանցի «ազգային հերոս» Բաբեկին «դավաճանաբար մատնելու» մեջ, միաժամանակ՝ «մատնիչներ ու դավաճաններ» որակելով հայերին: Վ. Օվյանի այս ստեղծագործությունը Ռ. Ռզայի այդ զառանցանքի պատասխանն է.

Լինեն թեկուզ թալեաթ հազար
Եվ նույնքան էլ փաշա ենվեր,
Որքան ոռնաս, Ռասուլ Ռզա,
Սմբատները միշտ ծնվել են
Ու կծնվեն ...

Բանաստեղծության մեջ նկարագրվում է, թե ինչպես «անտուն քոչվորի որդի» Բաբեկի ոհմակը պարտություն է կրում և ապաստան փնտրում: Ծանր այդ պահին հիշում է հայ իշխան Սմբատին, նրա գեղանի կնոջն ու քրոջը, նրա ջերմ ու հյուրասեր օջախը և որոշում է ապավինել նրան: Իշխան Սմբատը՝ ավանդապահ

¹ Զ. Սահյան, «Գրական թերթ», 1968, թիվ 30:

² «Լեռների լեգենդը», էջ. 168-169:

ու սրտաբաց, ճոխ սեղան է բացում, ուր հոսում է «յոթը տարվա փրփրադեզ գինին»: Նենգ թուրքը փրփրաբերան կենացներ է խմում, փառաբանում Սմբատին՝ նրան համարելով իր թիկունքը: Կեսգիշերին, երբ կերուխումից հետո գնում են հանգստանալու, «սրբապիղծ հյուրը» զգույշ ու թաքուն սողալով «օթախից», իր խուժանին հրամայում է շղթայակապ անել Սմբատին ու հարձակման անցնել: Երբ շղթայված ու ապշահար Սմբատ իշխանը հարցնում է Բաբելին, թե իր ո՞ր մեղքի համար այդպես վարվեց, վերջինս հանգիստ պատասխանում է.

Իմ ցեղն է քոչվոր ու աստանդական,
Եվ իմ արյունն է քոչվորի արյուն,
Մեզ վիճակված է միայն թալանել...

Եվ խուժանը Բաբելի հրամանով անարգում է Սմբատի կնոջը, քրոջն ու մորը, հռիռոցով ծանակում իրենց հյուրընկալողներին: Քաջագուն Սմբատը սուրհանդակի միջոցով ի գեմ է կոչում իր կտրիճներին: Նենգ ու տմարդի Բաբելը ծուղակն է ընկնում և արժանի ձևով մահկանացուն կնքում: Տմարդին ընկնում է... Սակայն չվերջացավ տմարդությունը:

Պատմական անցյալի դեպքերը Վ. Օվյանը շաղկապում է ներկայի հետ, երբ Բաբելի թռռն ու ծոռները՝

Մի Ռասուլ Ռզա, Ռզայի որդի,
Իր գրչին խառնած նախանձն ու թույնը՝
Թալեաթ փաշայի դրոշակն առել,
Ռռնում է մեր դեմ նենգ ու չարական:
Ընդդեմ այդ ոռնոցի, Սմբատները պիտի ծնվեն, և բանաստեղծը կոչ է անում.
Դառնալ մի բռունցք, մի կամք անասան,
Որ չհոշոտեն պտմությունը մեր
Ոչ մի Բունիաթով կամ Ռասուլ Ռզա:

Ինչպես տեսնում ենք, Խորհրդային Ադրբեջանի «եղբայրության» դիմակով քողարկված խարդավանքները շատերի պես չտեսնելու չի տվել Վ. Օվյանը: Պատմությունը նենգափոխողները պատվի ու օջախի նույն գողերն են, որոնց իրենց անուններով չէր կարող չկոչել հայրենախոս գրիչը: Թունանյանական պարզությամբ ու խորությամբ, էպիկական շնչով գրված այս ծավալուն քերթվածն ասես մի ամբողջ պատմավեպ է, ուր գործող անձերը տիպական ու կենդանի գույներով են կերտված:

Այսպիսով, Վազգեն Օվյանն իր հայրենասիրական քնարերգության մնայուն էջերում բացահայտել է բարեկամի դիմակով քողարկված, Արցախը հայաթափող ազերիների բռնապետության նենգությունն ու կեղծիքը: Նրա գրիչն անխնա էր նաև ազերիներին հլու ծառայող տեղական թափփուկներին մերկացնելիս:

Փաստորեն Վ. Օվյանի հայրենասիրական քնարը եղավ Արցախի ազատագրական շարժումը նախապատրաստող գործող ռունք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ. Օվյան «Լեռների լեզենդը». Երևան, «Անտարես», 2003թ.
2. Վ. Օվյան « Նկարիչ, Արցախ նկարիչ», Ստեփանակերտ «Պոլիգրաֆ», 2008թ.
3. Սատիրիկոն. Ստեփանակերտ «Պոլիգրաֆ», 2008թ.
4. Լ. Սարգսյան «Արցախի բանահյուսության լեզուն». Ստեփանակերտ 2011թ.
5. Ս. Խանյան «Հայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում», Ստեփանակերտ, 2005թ.«Սոնա» հրատ. էջ 370
6. Կիմ Աղաբեկյան «Հակոբ Օշական», Երևան «Զանգակ- 97», 2010թ. էջ 288
7. Լ. Գրիգորյան «Արցախի գրականության ընտանիքը», Երևան 2005, «Հայաստան» հրատ. էջ 160:

РЕЗЮМЕ

Цель в данной статье заключается в том, чтобы осведомить публику и дать понятие об активной деятельности известного писателя - арцахца Ваггена Овяна в деле народноосвободительной борьбы армянского народа.

SUMMARY

In this article author showed the main role of poetry of famous Artsakh writer V. Ovyan in the preparation of Artsakh liberation movement.